©ԵՐԻՏԱՍԱՐԴ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՀԿ, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ 4

2026Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ (%) 5

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ 6

1187 դասիչ 7

1187 դասիչ - 12003 ծրագիր 9

1187 դասիչ -12004 ծրագիր 10

1187 դասիչ – 12008 ծրագիր 11

1187 դասիչ - 12014 ծրագիր և 1187 դասիչ – 12015 ծրագիր 12

1187 դասիչ - 12018 ծրագիր 13

1187 դասիչ - 12024 ծրագիր 13

1022 դասիչ 14

1022 դասիչ - 11002 միջոցառում 15

1022 դասիչ - 12005 միջոցառում 16

Սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիր - 1022 դասիչ . 11006 ծրագիր 16

1022 դասիչ - 12010 միջոցառում 17

1022 դասիչ - 12011 միջոցառում 17

1022 դասիչ – 12013 միջոցառում 18

1059 դասիչ 18

1116 դասիչ 20

1086 դասիչ 21

2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ 23

Սույն վերլուծությունը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի վերլուծություն» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԵՄ	**Եվրոպական միություն**
ԷՆ	**Էկոնոմիկայի նախարարություն**
հա	**հեկտար**
ՀՀ	**Հայաստանի Հանրապետություն**
ՀՆԱ	**Համախառն ներքին արդյունք**
մլն	**միլիոն**
մլրդ	**միլիարդ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

- **2026 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 3.090.9 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 3.627.6 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով՝ 536.8 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-յի (11 տրիլիոն 933 մլրդ դրամ) համապատասխանաբար՝ 25.9%, 30.4% և 4.5%: Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 52.9 %:**
- **Գյուղատնտեսությանն ուղղված ծախսերը պետական բյուջեում ներկայացված են գյուղատնտեսական ծրագրերով, որոնք համակարգվում են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից:**
- **2026 թվականին Էկոնոմիկայի նախարարությանը կհատկացվի 74.5 մլրդ դրամ, որից գյուղատնտեսական ծրագրերին կուղղվի 39.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 3.6 մլրդ դրամով կամ 8.4 տոկոսով:**
- **Պետական բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ գյուղատնտեսության ծախսերը կկազմեն 1.1 տոկոս:**
- **Ֆինանսավորման ծավալով գյուղատնտեսության ծրագրերի շարքում առաջատարը Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն է: Այս ծրագրի ֆինանսավորումը կազմում է Գյուղատնտեսության բյուջեի 57.6 տոկոսը կամ 22.7 մլրդ դրամ: Հաջորդում է Գյուղատնտեսության խթանման ծրագիրը՝ 25.6 տոկոս կշռով կամ 10.1 մլրդ դրամով:**

2026 թվականին պետական բյուջեից գյուղատնտեսական ծրագրերին կուղղվի 39.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ֆինանսավորման մակարդակից պակաս է 8.37 տոկոսով կամ 3.6 մլրդ դրամով: Գյուղատնտեսասկան ծրագրերին հատկացվող միջոցները սկսել են նվազել 2024թ.-ից: 2026 թվականին պետական բյուջեից գյուղատնտեսական ծրագրերին ուղղվող միջոցները 2024թ.-ի նկատմամբ պակասել են 5.1 մլրդ դրամով կամ 11.46%-ով:

2026-ին բյուջեի ծախսերի ամենամեծ հատվածը՝ 27.4%-ը, կուղղվի սոցիալական ոլորտի պաշտպանությանը: Դա կկազմի մոտ 993 մլրդ դրամ: Երկրորդ խոշոր ուղղությունն ընդհանուր բնույթի հանրային ծառայություններն են՝ մոտ 851 մլրդ դրամ: Հաջորդը պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերն են՝ 566 մլրդ դրամ: Ծախսային հաջորդ խոշոր ուղղությունը կրթությունն է՝ մոտ 362 մլրդ դրամ: Իսկ հաջորդը՝ «Տնտեսական հարաբերություններ» տողը՝ 257 մլրդ դրամ: Իսկ գյուղատնտեսությանը կհատկացվի 39.4 մլրդ դրամ:

2026Ի ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ (%)

Գյուղատնտեսության ոլորտի կշիռը գործառնական դասակարգման մեջ 1.1% է, որը պակաս է նախորդ տարվա համեմատ 0.1 տոկոսային կետով:



Գյուղատնտեսական ծրագրերի բյուջեի կշիռը պետական բյուջեում աստիճանաբար նվազում է և 2026 թվականի համար կազմել է 1.1%, իսկ ՀՆԱ-յում վերջին տարիներին գրեթե մնացել է անփոփոխ՝ 2026ին նվազելով միայն 0.1 տոկոսային կետով՝ դառնալով 0.3 %:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Գյուղատնտեսության զարգացման պետական քաղաքականությունը 2026-ին կիրականացվի թվով 5 բյուջետային ծրագրերի միջոցով.

Ծրագիր	2025	2026	2026 տոկոս	2026/2025 տոկոս
Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր 1187	25.685	22.680	57.56	-11.70
Գյուղատնտեսության խթանման ծրագիր 1022	11.876	10.115	25.67	-14.83
Անասնաբուժական ծառայություններ 1116	2.945	2.336	5.93	-20.68
Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն 1059	125	1.534	3.89	+1127.2
Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում 1086	2.345	2.730	6.93	+16.42
ԸՆԴԱՄԵՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ	42.976	39.395	100	-8.33

Գյուղատնտեսության ոլորտի ամենամեծ բյուջետային ծրագիրը Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրն է, որին կուղղվի գյուղատնտեսության ծախսերի 57.56 տոկոսը: Հաջորդ մեծ ծրագիրն է՝ Գյուղատնտեսության խթանման ծրագիրը: Վերջինիս կուղղվի

գյուղատնտեսության ծախսերի 25.67 տոկոսը: Մյուս երեք ծրագրերը միասին ապահովում են գյուղատնտեսության ծախսերի ընդամենը 16.75 տոկոսը:



1187 դասիչ



Ծրագրի նպատակն է՝ գյուղատնտեսական տեխնիկական համակարգերի արդիականացում, ինտենսիվ այգիների ներդրման և տոհմաբուծության մեջ նոր ցեղատեսակների բուծման աջակցություն: Վերջնական արդյունքում ակնկալվում է ունենալ ոռոգման արդիական

համակարգեր ներդրված հողատարածքների և տոհմային կենդանիների տեսակարար կշռի ավելացում:

Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի բյուջեն նախորդ տարվա համեմատ նվազել է 3 մլրդ դրամով կամ 11.70 տոկոսով:

Ծրագիր/միջոցառում	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 կշիռ	2026/2025 տոկոս
Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	25.685.4	22.680.1	100	-11.70
Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում	2.466.9	1.357.7	5.99	-44.96
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիր	1.075.5	1.054.1	4.65	-1.99
Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր	3.492.8	1.839.1	8.11	-47.35
Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր	9.5	-		
Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	8.0	5.5	0.02	-31.25
Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովմանն աջակցություն	262.2	159.600	0.7	-39.13
Հայաստանի Հանրապետությունում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր	115.2	75.0	0.33	-34.90
Փոքր և միջին ջերմոցային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր	219.3	-		
ՀՀ-ում ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում	3.1	1.7	0.01	-45.16
Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով սուբսիդավորում	12.149.4	15.532.3	68.48	+27.84
Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով ծախսերի փոխհատուցում	3.842.4	328.989	1.45	-91.44
Հայաստանի Հանրապետությունում ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր	1.470.2	1.600.0	7.05	+8.83

Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ծրագրին աջակցություն	290.700	290.700	1.28	0.00
Մեղվաբուծության զարգացման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն	280.000	-		
Տնամերձ հողամասերում այգեհիմնման և ոռոգման արդիական համակարգերի ներդրման աջակցություն	-	175.000		
Հայաստանի Հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում աջակցություն	-	198.000		

Նախորդ տարվա համեմատ ցուցանիշները հիմնականում նվազել են, միայն երկու ծրագրերի դեպքում է աճ նկատվում դրանք են՝ ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով սուբսիդավորման և ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագրերը, համապատասխանաբար՝ 27.84 և 8.83 տոկոսով:

1187 դասիչ - 12003 ծրագիր



Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: Նախորդ տարվա համեմատ՝ 2026 թվականին նախատեսվում է 46 մլն դրամով կամ 4.18 %-ով ավելի քիչ գումար հատկացնել այս ծրագրի կատարմանը:



Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակը շարունակաբար աճում է և 2025 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ կազմել է 1082:

1187 դասիչ -12004 ծրագիր



Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: Նախորդ տարվա

համեմատ 2026 թվականին նախատեսվում է 1.7 մլրդ դրամով կամ 48.57%-ով ավելի քիչ գումար հատկացնել այս ծրագրի կատարմանը:

1187 դասիչ – 12008 ծրագիր

Տավարաբուծության զարգացման ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: 2026 թվականի պետական բյուջեով ծրագրին նախատեսվում է ուղղել 75 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 5.2 մլն դրամով կամ 23.36 տոկոսով:



1187 դասիչ - 12014 ծրագիր և 1187 դասիչ – 12015 ծրագիր

ՀՀ-ում ինտենսիվ այգեգործության զարգացման. արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: Բաղկացած է երկու բաղադրիչից՝ վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում և ծախսերի մասնակի փոխհատուցում: Հարկ է նշել, որ 2026թ.-ին ծրագրի այգեհիմնման փոխհատուցման բաղադրիչը դադարեցվել է, գործում է վարկային բաղադրիչը: 2026ին վարկերի տոկոսադրույքների մասնակի փոխհատուցմանը կհատկացվի՝ 15.532.282 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 3.382.8 մլրդ-ով կամ 27.84%-ով, իսկ ծախսերի մասնակի փոխհատուցմանը՝ 328.988 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 3.382.8 մլրդ-ով կամ 27.84%-ով:

ՀՀ-ՈՒՄ ԻՆՏԵՆՍԻՎ ԱՅԳԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ. ԱՐԴԻԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ՈՉ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ (ՄԼՆ ԴՐԱՄ)

	2022	2023	2024	2025	2026
Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով սուբսիդավորում	918.6	2300	13720.2	12149.4	15532.3
Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման նպատակով ծախսերի փոխհատուցում	1070	713.7	1990	714.7	329

2021-2025 թվականների» ծրագրի շրջանակներում վարկերի տոկոսադրյուքների սուբսիդավորման միջոցով հիմնվել է 2560.0 հա ինտենսիվ այգի, որի համար հատկացվել է 40.492.114.625 դրամ սուբսիդավորում: Իսկ 2025 թվականին 19 շահառուի տրամադրվել է 714.7 մլրդ ՀՀ դրամ փոխհատուցում՝ 104.7 հա ընդհանուր մակերեսով այգեհիմնման համար:

1187 դասիչ - 12018 ծրագիր

«Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024-2028 թվականների» ծրագրի շրջանակներում ձեռք են բերվել 649 գլուխ տոհմային մանր եղջերավոր կենդանի և փաստացի փոխհատուցվել է 102.684.712.00 ՀՀ դրամ գումար:

1187 դասիչ - 12024 ծրագիր



«Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: Նախորդ տարվա համեմատ 2026 թվականին նախատեսվում է 102.6 մլն դրամով կամ **39.13%**-ով ավելի քիչ գումար հատկացնել այս ծրագրի կատարմանը:

2022-ին շահագործման է հանձնվել **13**. 2023ին՝ **2.** 2024ին՝ **7** անասնաշենք:

1022 դասիչ



Գյուղատնտեսության խթանման ծրագիրը մեծությամբ երկրորդ ծրագիրն է գյուղատնտեսական ծրագրերի մեջ: 2026 թվականի պետական բյուջեով նախատեսվում է գյուղատնտեսության խթանման ծրագրին հատկացնել 10.1 մլրդ դրամ կամ ընդհանուր գյուղատնտեսական ծրագրերի 25.67 տոկոսը: Նախորդ տարվա համեմատ գյուղատնտեսության խթանման ծրագրի բյուջեն նվազել է 1.8 մլրդ դրամով կամ 15.13 տոկոսով:

Գյուղատնտեսության խթանման ծրագիրը բաղկացած է 11 միջոցառումներից:

Ծրագրի ընդհանուր բյուջեի (10.115.872.2) բաշխվածությունը՝ արձանագրվում է ֆինանսական միջոցների խիստ կենտրոնացվածություն երկու առանցքային ուղղություններում՝ «Անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցություն» շուրջ 5.25 մլրդ դրամ կամ 51.91% և «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով

տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» շուրջ 3.08 մլրդ դրամ կամ 30.45%, որոնք միասին կազմում են ընդհանուր հատկացումների 82.36%-ը:

Մյուս միջոցառումները միասին կազմում են ընդհանուր ծրագրի 17.64%-ը:



1022 դասիչ - 11002 միջոցառում



Գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ներդրումների ծավալը 2026թ.-ի բյուջեով կկազմի 329 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 12 մլն-ով կամ 3.79 տոկոսով:

1022 դասիչ - 12005 միջոցառում

Գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: 2026 թվականի բյուջեով ծրագրի իրականացմանը կուղղվի 200 մլն դրամ, որը նախորդ տարվա համամեմատ պակաս է 86.38 տոկոսով:

Սպանդանոցների կողմից մատուցվող խոշոր եղջերավոր կենդանիների սպանդի ծառայության վճարի մասնակի փոխհատուցման ծրագիր - 1022 դասիչ . 11006 ծրագիր

Կառավարության 2024 թվականի օգոստոսի 1-ի N 1176-Լ որոշմամբ հաստատված Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիրը մեկնարկել է 2024 թվականի օգոստոսի 1-ից: Ծրագրի շրջանակներում 2025 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ ստացվել է 20 հայտ և տրամադրվել է շուրջ 83.8 մլն դրամ աջակցություն: Ըստ 2026 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի՝ ծրագրին նախատեսվում է հատկացնել 730.000 հազ. դրամ:

1022 դասիչ - 12010 միջոցառում



Անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: 2026 թվականի բյուջեով ծրագրի կատարմանը նախատեսվում է հատկացնել 5.25 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ ավել է 2.84մլրդ-ով կամ 117.84 տոկոսով:

1022 դասիչ - 12011 միջոցառում



Հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության ծրագիրը ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: 2026 թվականի բյուջեով ծրագրի կատարմանը նախատեսվում է հատկացնել 0.1մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 100մլն-ով կամ 100տոկոսով:

1022 դասիչ – 12013 միջոցառում



Արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման ծրագիրը գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերից է: 2026 թվականի բյուջեով ծրագրի կատարմանը նախատեսվում է հատկացնել 96.4 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ պակաս է 102.6 մլն-ով կամ 51.56 տոկոսով:

1059 դասիչ

«Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն» ծրագրի նպատակը հողագործությունից ստացվող արդյունքի բարելավումն է: Որպես վերջնական արդյունք՝ ակնկալվում է մշակաբույսերի միջին բերքատվության բարձրացում. հացահատիկի և

հատիկաընդեղենի արտադրության ծավալների ավելացում. ինչպես նաև ՀՀ գյուղատնտեսական նշանակության ողջ հողատարածքի՝ ագրոքիմիական քարտեզներով ապահովվածություն:

2026ին Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրին հատկացվող միջոցները կկազմեն 1.534.002.1 մլրդ դրամ. որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 1123.47%-ով:

Ծրագիրը բաղկացած է 5 միջոցառումներից՝

1. Բուսասանիտարիայի ծառայությունների. հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում:
2. Բույսերի պաշտպանության միջոցառումներ:
3. Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ:
4. ՀՀ-ում գարնանացան. աշնանացան և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների մոնիթորինգի իրականացմանն աջակցություն:
5. ՀՀ-ում գարնանացան. աշնանացան և կերային մշակաբույսերի մշակության հիմնական աշխատանքների համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրում:

	Ծրագիր/միջոցառում	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 կշիռ տոկոս	2026/2025 տոկոս

1059	Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն	125.382	1.534.002.1	100	+1123.47
1059 - 11001	Բուսասանիտարիայի ծառայությունների. հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների իրականացում	47.940	47.940	3.13	0
1059 - 11002	Բույսերի պաշտպանության միջոցառումներ	29.376	29.376	1.91	0
1059 - 11003	Սերմերի որակի ստուգում և պետական սորտափորձարկման միջոցառումներ	48.065	55.886	3.64	16.27
1059 - 11010	ՀՀ-ում գարնանացան. աշնանացան և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների մոնիթորինգի իրականացմանն աջակցություն	-	40.800	2.66	
1059 - 12003	ՀՀ-ում գարնանացան. աշնանացան և կերային մշակաբույսերի մշակության հիմնական աշխատանքների համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրում	-	1.360.000	88.66	

Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն ծրագրին հատկացվող բյուջեի հսկայական աճը պայմանավորված է «ՀՀ-ում գարնանացան, աշնանացան և կերային մշակաբույսերի մշակության հիմնական աշխատանքների համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրում» ծրագրի իրականացմամբ, որը չի իրականացվել նախորդ տարիներին: Միջոցառման համար նախատեսվում է 1.360.000 մլրդ դրամ, որը կազմում է ընդհանուր ծրագրի 88.66 տոկոսը:

1116 դասիչ

«Անասնաբուժական ծառայություններ» ծրագիրն ուղղված է *անասնահամաճարակային անվտանգության ապահովմանը՝ որպես գյուղատնտեսության կայուն զարգացման նախապայման:* Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է *ապահովել կենդանիների բարձր վարակամերժություն՝ նվազագույնի հասցնելով տնտեսական վնասները և երաշխավորելով սպառողների համար անվտանգ մթերքի արտադրությունը*:

	Ծրագիր/միջոցառում	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 կշիռ տոկոս	2026/2025 տոկոս
1116	Անասնաբուժական ծառայություններ	2.945.4	2.336.0	100	-20.69
1116 - 11001	Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում	2.354.0	1.747.2	74.79	-25.77
1116 - 11005	Հայաստանի Հանրապետությունում խոշոր և մանր եղջերավոր կենդանիների համարակալում և հաշվառում	465.0	462.4	19.79	-0.56
1116 - 12001	Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի շրջանակներում կովերի արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում	126.4	126.4	5.41	0

«Անասնաբուժական ծառայություններ» ծրագրի գծով 2026 թվականի համար նախատեսվել է **2.336.0 մլն դրամ**, ինչը 2025 թվականի հաստատված բյուջեի (2.945.4 մլն դրամ) համեմատ նվազել է **20.69%**-ով (կամ 609.4 մլն դրամով):

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»-ը ծրագրի ամենախոշոր բաղադրիչն է, որի տեսակարար կշիռը 2026թ.-ի ընդհանուր բյուջեում կազմում է **74.79%**: Միջոցառման համար նախատեսվել է **1.747.2 մլն դրամ**, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է **25.77%**-ով: Հարկ է նշել, որ հենց այս միջոցառման գծով կրճատումն է հիմնականում պայմանավորել ամբողջ ծրագրի բյուջեի նվազումը:

1086 դասիչ

«Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում» ծրագիրն ուղղված է *գյուղատնտեսության որոլրտի արդյունավետ աճին*: Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է *գյուղատնտեսական արտադրանքի ծավալների ավելացում:*

Ծրագիրը բաղկացած է 5 միջոցառումներից՝

1. Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում» ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և ղեկավարում:

2. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» դրամաշնորհային ծրագրի համակարգում և ղեկավարում:
3. Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ժամանակակից պահանջներին համապատասխան ոռոգման համակարգերի ներդրման և զարգացմանն աջակցություն:
4. Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» դրամաշնորհային ծրագիր:
5. Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում Ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագիր:

	Ծրագիր/միջոցառում	2025 մլն դրամ	2026 մլն դրամ	2026 կշիռ տոկոս	2026/2025 տոկոս
1086	Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	**2.345.4**	**2.730.9**	**100**	**+16.4**
1086 - 11004	Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում» ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագրի համակարգում և ղեկավարում	656.6	477.3	17.5	-27.3
1086 - 11005	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային անվտանգության բարձրացման» դրամաշնորհային ծրագրի համակարգում և ղեկավարում	150.0	358.2	13.1	+138.8
1086 - 12003	Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ժամանակակից պահանջներին համապատասխան ոռոգման համակարգերի ներդրման և զարգացմանն աջակցություն	1.282.9	1.527.1	55.9	+19.0
1086 - 12004	Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Կլիմայական փոփոխություններին հարմարեցվող պարենային	200.0	367.2	13.5	+83.6

	անվտանգության բարձրացման» դրամաշնորհային ծրագիր				
1086 - 31001	Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ իրականացվող ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում Ոռոգվող գյուղատնտեսության զարգացման դրամաշնորհային ծրագիր	105.9	1.2	0.04	-98.9

«Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում» ծրագրի գծով 2026 թվականի համար նախատեսվել է **2.730.9 մլն դրամ**, ինչը 2025 թվականի հաստատված բյուջեի (2.345.4 մլն դրամ) համեմատ աճել է **16.4%**-ով (կամ 385.5 մլն դրամով):

«Զարգացման ֆրանսիական գործակալության աջակցությամբ ՀՀ Արարատի և Արմավիրի մարզերում ժամանակակից պահանջներին համապատասխան ոռոգման համակարգերի ներդրման և զարգացմանն աջակցություն»-ը ծրագրի ամենախոշոր բաղադրիչն է, որի տեսակարար կշիռը 2026 թ, ընդհանուր բյուջեում կազմում է **55.9%**: Միջոցառման համար նախատեսվել է **1.527.1 մլն դրամ**, ինչը նախորդ տարվա համեմատ աճել է **19.0%**-ով: Հարկ է նշել, որ հիմնականում այս միջոցառման (ինչպես նաև Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի) գծով հատկացումների ավելացմամբ է պայմանավորված ամբողջ ծրագրի բյուջեի աճը:

2025 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

- 2025թ.-ին տնամերձ հողամասերում այգեհիմնման փորձնական 2-րդ ծրագիրն իրականացվել է Տավուշի մարզի Բերքաբեր, Խաշթառակ. Ծաղկավան և Կիրանց բնակավայրերում: 4 համայնքներից ծրագրին մասնակցում է 97 շահառու՝ 6 հա ընդհանուր մակերեսով այգեհիմնման համար:
- «Մեղվաբուծության զարգացման փորձնական» ծրագիրը նախատեսված է իրականացնել 2024-2025 թվականներին: Երկու տարիների ընթացքում քաղաքացիներից ստացվել է շուրջ 150 հայտ, որից հաստատվել է շուրջ 113-ը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել շուրջ 2700 մեղվափեթակ (մեղվաընտանիքով):

- 2025 թվականին՝ հոկտեմբերի 31-ի դրությամբ գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում հաստատվել է 205 հայտ՝ շուրջ 13.7 մլրդ դրամի չափով, սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 2.7 մլրդ դրամ:
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) հետ համատեղ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն ծրագրի շրջանակներում 2025 թվականին կնքվել է 32 ապահովագրական պայմանագիր՝ 20 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար, համախառն ապահովագրավճարը կազմել է շուրջ 1.9 մլն դրամ, սուբսիդավորվման գումարը՝ շուրջ 1.3 մլն դրամ:
- Մթերատվության բարձրացման փորձնական ծրագրի շրւանակներում 2025 թվականի ընթացքում սերմնավորվել է 3290 կով:
- Գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի շրջանակներում 2025 թվականին՝ նոյեմբերի 1-ի դրությամբ ձեռք է բերվել 1082 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 292 միավոր տրակտոր և 2 միավոր կոմբայն: Լիզինգի գումարը կազմել է շուրջ 4.5 մլրդ դրամ. ծրագրի մեկնարկից տրամադրված լիզինգի համար նույն ժամանակահատվածում սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 777.5 մլն դրամ:
- Հայաստանի հանրապետությունում 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում փոխհատուցման բաղադրիչով ձեռք են բերվել 110 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ և փոխհատուցվել է 36.000.000.00 ՀՀ դրամ գումար, իսկ ծրագրի վարկային բաղադրիչով հաստատվել է 32.000.000.00 ՀՀ դրամի վարկ 32 գլխի համար. որից սուբսիդավորվել է 241.095.90 ՀՀ դրամ գումար:
- «Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման. արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2025 թվականների» ծրագրի շրջանակներում վարկերի տոկոսադրյուքների սուբսիդավորման միջոցով հիմնվել է 2560.0 հա ինտենսիվ այգի, որի համար հատկացվել է՝ 40.492.114.625 դրամ սուբսիդավորում: 2025 թվականին 19 շահառուի տրամադրվել է 714.7 մլրդ ՀՀ դրամ փոխհատուցում՝ 104.7 հա ընդհանուր մակերեսով այգեհիմնման համար:

- Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2025 թվականին 0.29 հա ընդհանուր մակերեսով 1 ջերմատան կառուցման նպատակով տրամադրվել է շուրջ 43.8 մլն ՀՀ դրամի չափով փոխհատուցում: